



ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
ՀՀ ԲՆԱԴԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐ



Ա. ՄԻՆԱՍՅԱՆ
Ա. ՄԻՆԱՍՅԱՆ

«27» 10 2017թ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ
ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ 95

Ձեռնարկողը՝

<<Էյ Թի Էմ Էս Սոյուշնա>> ՍՊԸ
Ք. Երևան, Վ. Սարգսյան 26

Գործունեությունը՝

<<110/35/6>> 35/6 կՎ Սոթք>> Ենթակայանում 110կվ
բջիջի տեղադրման շրջակա միջավայրի վրա
ազդեցության գնահատման հաշվեփութություն
ՀՀ Գեղարքունիքի մարզ

<<Շրջակա միջավայրի վրա ազդեցության
փորձաքննական կենտրոն>> ՊՄԱԿ-ի
տնօրեն՝



Վ. Սահակյան

Վ. Սահակյան

Առդիր եզրակացությունը՝ 3թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱԸՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱԸՆՆՈՒԹՅԱՆ

թիվ ԲՓ 95

«27» 10 2017թ.

«Էյ թի էմ էս Սոլյուշնս» ՍՊԸ կողմից ներկայացված "Հայաստանի Էլեկտրական Ցանցեր" ՓԲԸ-ի "110/35/6" 35/6 կՎ Սոթք" ենթակայանում 110կվ բջջի տեղադրման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն

Պատվիրատու՝ «Էյ թի էմ էս Սոլյուշնս» ՍՊԸ

Նախագծող՝ «Էներգացանցնախագիծ ինստիտուտ» ՓԲԸ, «Էյ թի էմ էս Սոլյուշնս» ՍՊԸ,

Ներկայացված նյութեր՝ Աշխատանքային նախագիծ, ՇՄԱԳ հաշվետվություն

Տեղադրման վայրը՝ ՀՀ Գեղարքունիքի մարզ



Ներկայացված է 2017 թ. 10 ամսին

Համաձայն ներկայացված նախագծի ՀՀ Գեղարքունիքի մարզում գտնվող 110/35/6 կՎ "Սոթք" ԵԿ-ի կապը ԼՂՀ-ի Զագլիկ գյուղում գտնվող 110/35/6 կՎ "Հաթերք" ԵԿ-ի հետ ապահովելու նպատակով՝ նախատեսում է 110/35/6 կՎ "Սոթք" ԵԿ-ում էլեկտրագազային անջատիչով 110 կՎ բջջի տեղադրման աշխատանքներ:

Նախատեսվող գործունեության՝ 110/35/6 կՎ "Սոթք" ենթակայանի տարածքը՝ գտնվում է Գեղարքունիքի մարզի Սոթք համայնքի վարչական սահմաններում: Համայնքը գտնվում է Մարզի հարավ-արևելյան մասում, Սոթք գետի ափին՝ մարզկենտրոնից (ք. Գավառ) 85 կմ հեռավորության վրա: Համայնքը տեղակայված է ծովի մակերևույթից 2020 մ բարձրության վրա:

Նախատեսվող գործունեության՝ 110/35/6 կՎ "Սոթք" ենթակայանի տարածքը գտնվում է Սոթք համայնքի վարչական սահմաններում: Հեռավորությունը ենթակայանի և Սոթք համայնքի մոտակա բնակելի շինության միջև մոտ 600 մ է: Նախատեսվող գործունեության տարածքին հարևանող մյուս բնակավայրերը՝ Ազատ և Կութ համայնքները բավականին հեռու են և գտնվում են համապատասխանաբար 3.3 կմ և 1.9 կմ հեռավորության վրա:

"Սոթք" ենթակայանում էլեկտրագազային անջատիչով 110 կՎ բջջի տեղադրման համար ընտրված են հետևյալ սարքավորումները՝

- էլ.գազային անջատիչ LW 36-126 տիպի զսպանակավոր շարժաբերով,
- Եռաբևեռ բաժանիչ GW4F-126 տիպի մեկ և երկու հողանցման դանակներով CS11G տիպի ձեռքի շարժաբերով և CJ6B տիպի էլ.շարժիչային շարժաբերով,
- Հոսանքի տրանսֆորմատոր LB7-110 տիպի,
- Անջատիչ բաշխիչ արկղ (Marshaling kiosk):

Նոր տեղադրվող 110 կՎ բջջի շանթապաշտպանությունը կայծակի ուղիղ հարվածներից, իրականացվում է գոյություն ունեցող 110 կՎ պորտալների վրա տեղադրված շանթարգելների միջոցով ստեղծված շանթապաշտպանիչ գոտում:

110 կՎ նոր բջջի սարքավորումների հողանցման համար նախատեսվում է 40 մմ x 4 մմ կտրվածքով շերտապողպատ: Քանի որ 110/35/6 կՎ "Սոթք" ենթակայանը գործող է և գոյություն ունի հողանցման ցանց, ապա աշխատանքային նախագծով նոր տեղադրվող բջջի բոլոր սարքավորումների մետաղական հենասյուները շերտապողպատով եռակցվելու են գոյություն ունեցող ընդհանուր հողանցման եզրագծին: Նախագծով նոր 110 կՎ բջջի համար չի նախատեսվում նաև նոր անցուղիների կառուցում, փոփոխական և հաստատուն հոսանքի վահանների տեղադրում, արտաքին և ներքին լուսավորություն:

"Սոթք" ենթակայանում 110կՎ բջջի տեղադրման համար նախատեսվել է՝ ԿՀ-1, ԿՀ-2 և ԿՀ-3 մակնիշի կետային հիմքերի, ՀՆ-1, ՀՆ-2, ՀՆ-3 և ՀՆ-4 մակնիշի հենարանների ու մեկ ՊՀ-1 միաձույլ երկաթբետոնե հիմքի կառուցում:

Սարքավորումների հենարանային կանգնակները նախագծված են պողպատե խողովակներով, իսկ հենարանային մասերը՝ պողպատե գլոցվածքից տարրերով: Սարքավորումների կանգնակների հիմքերը նախագծված են միաձույլ երկաթբետոնից:

Պողպատե կոնստրուկցիաները նախատեսված է ներկել մթնոլորտակայուն էմալով ՈՓ-133/115-ով (ГОСТ 926-82)՝ ՈՓ-0142 (ТУ.6-10-1698-78) նախաներկման վրա: Շինարարական կոնստրուկցիաների հակակոռոզիոն աշխատանքները իրականացվելու են СНИП 2.03.11-85 պահանջներին համապատասխան:

"Սոթք" ենթակայանում 110 կՎ բջջի տեղադրման ընթացքում նախատեսվում է կիրառել հետևյալ տեխնիկական միջոցները՝ ավտոկոունկ և բեռնատար մեքենա: Հողային աշխատանքները կատարվելու են ձեռքով:

Նախատեսվող վերագինման աշխատանքների իրականացման ընթացքում արտանետումները առաջանում են հողային աշխատանքների և շինարարական տեխնիկայի աշխատանքի արդյունքում: Շինարարական աշխատանքները կրում են ժամանակավոր բնույթ ակնկալվում է, որ կլինեն փոքրածավալ, կարճաժամկետ և տեղայնացված:

Շինարարական աշխատանքների ժամանակ ջուրն օգտագործվում է աշխատողների կոմունալ կենցաղային նպատակների և շինարարական հրապարակի ջրցանի համար:

Նախատեսվող գործունեության շինարարության փուլում շրջակա միջավայրի վրա վնասակար ազդեցությունների կանխարգելման և նվազեցման համար նախատեսվում են հետևյալ միջոցառումները.

- հողային աշխատանքները նախատեսվում է կատարել փոշեորսիչ սարքերով սարքավորված տեխնիկական միջոցներով,

- պարբերաբար իրականացնել շինարարական տեխնիկայի շարժիչների կարգավորում,

- սորուն շինանյութերը պահեստավորել ծածկի տակ գտնվող և հատուկ թաղանթով պաշտպանված վայրում,

- իրականացնել խճի, պահեստավորված և տեղափոխվող հողային զանգվածների խոնավացում, շինհրապարակի ջրցան,

- խնամքով վերաբերվել մոտակա ծառերին և թփերին, պահպանելով նրանց վնասումից և ոչնչացումից,

- Աշխատանքների ավարտից հետո անհրաժեշտ է մաքրել շրջակա տարածքը ավելորդ գրունտից և շինարարական աղբից:

Նախատեսվող աշխատանքների արդյունքում շրջակա միջավայրին հասցվող վնասը դրամային արտահայտմամբ հաշվարկվել է 361241 դրամ:

Եզրահանգում՝ Նախատեսվող գործունեության հիմնական ազդեցությունը պայմանավորված է շինարարության փուլով, ինչը չունի զգալի ազդեցություն և կրում է

Ժամանակավոր բնույթ: Փորձաքննության ընթացքում իրականացվել է 4 հանրային քննարկում, որոնց արդյունքում կազմված արձանագրություններով մասնակիցները նախատեսվող գործունեության իրականացմանը տվել են իրենց հավանությունը:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

<<Էլ թի էմ էս Սոլյուշնս>> ՍՊԸ կողմից ներկայացված "Հայաստանի էլեկտրական Ցանցեր" ՓԲԸ-ի "110/35/6" 35/6 կՎ Սորթ" ենթակայանում 110կվ բջիջի տեղադրման հաշվետվության վերաբերյալ տրվում է դրական եզրակացություն:



Ա. Մինասյան